ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

«11» 10 2017 թ. N 81-Ա43

«ՄՈՄԻԿ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ» ՈՍԿԵ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, դրա կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1294-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1111-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 15-րդ կետի 18-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ճարտարապետի միջազգային օրվա կապակցությամբ և ճարտարապետության բնագավառում նշանակալի ավանդի համար «Մոմիկ ճարտարապետ» ոսկե մեդալով պարգևատրել.

1) ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի տնօրենի տեղակալ, ճարտարապետության դոցենտ Հովհաննես Սանամյանին,

2) ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի տնօրենի տեղակալ, ճարտարապետության թեկնածու Կորյուն Ղաֆադարյանին:

Ն.ՍԱՐԳՍՅԱՆ

«11» 10 2017թ.
ք. Երևան